ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 281- Ա **06 նոյեմբերի 2018 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 68-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2009 թվականի հոկտեմբերի 30-ի «Մարզային հանձնաժողով ստեղծելու մասին» N 68-Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու համար անհրաժեշտ եզրակացություն տրամադրելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սանոսյան Գ.	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, հանձնաժողովի նախագահ
Համբարձումյան Հ.	- մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Ղուրշուդյան Մ.	- մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ
Մելքոնյան Ս.	- «Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ»-ի ղեկավար /համաձայնությամբ/
Գասպարյան Ս.	- մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչի տեղակալ

Համապատասխան համայնքի ղեկավարը /համաձայնությամբ/

Համապատասխան համայնքապետարանի գյուղատնտեսության գծով մասնագետը /համաձայնությամբ/»:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրմանից հետո:

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Ք. Գավառ